ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ԿԱՊԱՆԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

16.08.2025

Սիրելի՛ կապանցիներ
Շնորհավորում եմ բոլորիս Սյունիքի մարզկենտրոնի՝ մեր սիրելի Կապանի օրվա կապակցությամբ:

Յուրաքանչյուր քաղաքացու համար հայրենիքը սկսվում է ծննդավայրից, որտեղ նա հասակ է առնում, աշխատում, զավակներ մեծացնում և ապագայի ծրագրեր կազմում: Եվ այս տոնը սիրելի քաղաքի պատմությունը, մշակույթը և անցած ուղին մեծարելու օրն է:
Հարուստ ավանդույթներով, պատմամշակութային, կրթական արժեքներով հայտնի Կապանի օրը առիթ է բնակիչների համար ևս մեկ անգամ հաստատելու նվիրվածությունը քաղաքի զարգացման, նրա յուրահատուկ բնույթը պահպանելու և ավելի լավ ապագա կառուցելու գործին: Դա Սյունյաց մարզենտրոնը ծաղկեցնող և առաջ մղող շարժիչ ուժն է:

Իսկ տոնը միավորում է ոչ միայն կապանցիներին, այլև բոլոր նրանց, ովքեր սիրում և գնահատում են մեր հայրենիքի այս զարմանահրաշ անկյունը:
Շնորհակալությո՛ւն նրանց, ովքեր իրենց աշխատանքով, հոգատարությամբ և տաղանդով անգնահատելի ներդրում են ունենում քաղաքի զարգացման և բարեկեցության գործում:

Վստահ եմ, որ մեր համատեղ կամքի և ջանքի շնորհիվ կշարունակենք Կապանը դարձնել ավելի կենսունակ և բարգավաճ՝ գալիք սերունդների համար:
Քաղաքի բնակիչներին խաղաղություն, երջանկություն, հայրենի բնօրրանում նոր հնարավորություններ ու կայուն զարգացման վստահություն եմ մաղթում:

Թո՛ղ սերն ու ներդաշնակությունը միշտ թևածեն բոլորիդ ընտանիքներում, իսկ Կապանը շարունակի ծաղկել ու գեղեցկանալ: